Հրդ 312194

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ ԿՆՔՎԱԾ «ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ» N 282 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան «27» «12» 2019 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի (այսուհետ՝ «Պատվիրատու»), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամը, ի դեմս նախագահ Ս. Կարապետյանի (այսուհետ՝ «Կատարող»), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հիմք ընդունելով 25.06.2019 թ. կնքված «Դրամաշնորհի հատկացման» N 282 պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 10.2-րդ կետը՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1. Պայմանագրի 6.1-ին կետում «2019 թվականի դեկտեմբերի 26-ն» և «2020 թվականի հունվարի 31-ը» բառերը համապատասխանաբար փոխարինել «2020 թվականի հունվարի 31-ն» և «2020 թվականի փետրվարի 28-ը» բառերով.

1.2. Պայմանագրի 9.1-ին կետում «2020 թվականի փետրվարի 28-ը» բառերը փոխարինել «2020 թվականի մարտի 31» բառերով.

1.3. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված N 2-ում «2019 թ. դեկտեմբերի 25» բառերը փոխարինել «2020 թվականի հունվարի 31» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հինգ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ
Երևան, Կառավարական տուն 2	Երևան, Գյուլբենկյան 38ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արդշիինվեստ բանկ» ՓԲԸ
ՀՀ 900011031664	Հ/Հ 2474500069910000
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀԿ 00053543
	Հեռ.՝ 010 52 15 25
Գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
_____ Ն. Հարությունյան	_____ Ա. Կարապետյան
Կ.Տ. 02698732	Կ.Տ. RAA 00053543